ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 01/03.1/3936-21

«20» 08 2021

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հասցե՝ ք. Երևան, Բուզանդի փող., 1/3 շենք, 4-րդ հարկ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի օգոստոսի 17-ին էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի միջոցով ներկայացված թիվ 347-93 հարցման՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումների պատասխանների տրամադրման որակի, ժամկետների, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը և դրանց դիտարկումը:

Այս կարևոր ուղղությունը նպատակ ունի շարունակաբար ամրապնդել պետության և քաղաքացիների կապը, իրացնել քաղաքացիների տեղեկություններ ստանալու իրավունքը: Այս իրավունքի իրացմանն առնչվող խնդիրների վերհանումը և դիտարկումը հիմնվում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և դրանց վիճակագրության վարման արդյունքների վրա:

Այսպես, վիճակագրության մանրամասն ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ 2017 թվականից մինչև 2021 թվականի օգոստոսի 15-ը Պաշտպանի աշխատակազմ ստացվել է տեղեկատվության ազատությանը վերաբերող 394 դիմում-բողոք:

2017 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 46, ապա 2018 թվականին դրանց թիվը կրկնակիից ավելի աճել է՝ հասնելով 109-ի: Դիմում-բողոքների թիվը շարունակել է բարձր մնալ նաև հաջորդող տարիներին: 2019 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 98, իսկ 2020-ին՝ 112: 2021 թվականի օգոստոսի 15-ի դրությամբ դիմում-բողոքների թիվը կազմել է 29:

Խնդրում եմ նկատի ունենալ, որ վիճակագրական տվյալները չեն վերաբերում պետական մարմիններին ուղղված լրագրողական հարցումներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ

Կատարող՝ Գլխավոր քարտուղարի տեղակալ
Վլադիմիր Հովհաննիսյան
Հեռ.՝ (010) 53-76-34